**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

# ՀՐԱՄԱՆ

«21» «Մայիս» 2025 թվական № 189-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2024-2033 ԹԹ. ԱՆՏԱՌԱՇԻՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ (ԱՆՏԱՌԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2024 թվականի հոկտեմբերի 10-ի ԲՓ №-212-24 պետական փորձաքննական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլանը)՝ համաձայն հավելվածի:

2. Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած հնգօրյա ժամկետում ապահովել անտառաշինական նախագծի (անտառակառավարման պլանի) հանձնումը շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառային տնտեսության վարումն իրականացնել սույն հրամանի առաջին կետով հաստատված անտառաշինական նախագծին (անտառակառավարման պլանին) համապատասխան:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

5/21/2025

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Երևան

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588